Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 356-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածով սահմանված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ 2024 թվական

Միջոցառում	Կատարման ընթացիկ վիճակը
Միջոցառում 1.2. Սննդամթերքի անվտանգության ոլորտի գործող ինստիտուցիոնալ կառույցների գործունեության բարելավում, նոր կարողությունների զարգացում՝ ԵԱՏՄ և միջազգային չափանիշներին համապատասխան, որի արդյունքում կիստակեցվեն պետական կառավարման համակարգի մարմինների, ինչպես նաև պետական ոչ առևտրային և այլ կազմակերպությունների գործառույթները:	Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ինստիտուցիոնալ կառույցների գործունեության բարելավմանն ուղղված՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են միջազգային չափանիշներին համապատասխան մի շարք օրենսդրական նախաձեռնություններ. մշակվել և 2024 թվականի ապրիլի 12-ին և նոյեմբերի 15-ին ընդունվել են ««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-210-Ն, ««Կերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-211-Ն, ««Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-461-Ն օրենքները և ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի «Անասնաբուժական պատվաստանյութերի, շիճուկների և ախտորոշիչ միջոցների գովազդի թույլտվության կարգը սահմանելու մասին» N 73-Ն որոշումը: 2023-2024 թվականներին ՀՀ օրենսդրության, իրավական այլ ակտերի և միջազգային ԻՍՕ/ԻԷԿ 17000 համակարգի ստանդարտների պահանջներին համապատասխան՝ հավատարմագրվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության ենթակայությամբ գործող «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ենթակայությամբ գործող «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հատուկ վտանգավոր ախտածինների ռեֆերենս, սննդամթերքի անվտանգության հետազոտությունների, բուսասանիտարական և բույսերի պաշտպանության միջոցների հետազոտությունների և Բագրատաշենի և Այրումի սահմանային հսկիչ կետի փորձարկման լաբորատորիաները: Վերը նշվածի հաշվառմամբ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը վերապահվել են կերային հավելումների պետական գրանցման և ռեեստրի վարման, պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրություն և

	վաճառքի գործունեության ծանուցման, անասնաբուժական պատվաստանյութերի, շիճուկների և ախտորոշիչ միջոցների գովազդի թույլտվության գործառույթները:
Միջոցառում 1.3. Սննդամթերքի անվտանգության ոլորտում արագ արձագանքման համակարգի ներդրում	Արագ արձագանքման համակարգի ներդրման նպատակով, մշակվել և շրջանառման փուլում է գտնվում ««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:
Միջոցառում 2.1. Ազգային օրենսդրությունը ԵԱՏՄ և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության վերանայում, իրավական ակտերում սահմանված կարգով փոփոխությունների և լրացումների կատարում, ինչպես նաև մի շարք նոր օրենքների և ենթաօրենդրական ակտերի ընդունում	Մշակվել, շրջանառվել և ընդունվել է սննդամթերքի անվտանգության ապահովմանն ուղղված շուրջ երեք տասնյակ իրավական ակտ:
Միջոցառում 3.1. Լաբորատորիաների ցանցի ստեղծման մեխանիզմների մշակում և անհրաժեշտ մարդկային ու տեխնիկական ռեսուրսների հստակ հատկորոշում՝ 1.Ներկա իրավիճակի, այդ թվում՝ մարդկային ու տեխնիկական ռեսուրսների գնահատում,	Միջոցառման շրջանակներում ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունում գործող լաբորատոր համակարգի ներկայիս իրավիճակը, վերհանվել և վերլուծվել են առկա խնդիրները: Մշակվել և շրջանառվել է «Լաբորատորիաների ցանցի ստեղծման մեխանիզմների մշակման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Էկոնոմիկայի նախարարությունը լաբորատոր կարողությունների հզորացման նպատակով համագործակցել է շահագրգիռ մարմինների հետ մի շարք գործող իրավական ակտերով հաստատված միջոցառումների շրջանակներում:

2. Բացերի գնահատում, կարիքների վերլուծություն, 3. Կարողությունների հզորացմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում:	Հավատարմագրման ոլորտն ընդլայնելու նպատակով՝ 2023-2024 թվականներին ՀՀ օրենսդրության, իրավական այլ ակտերի և միջազգային ԻՍՕ/ԻԷԿ 17000 համակարգի ստանդարտների պահանջներին համապատասխան՝ հավատարմագրվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության ենթակայությամբ գործող «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ենթակայությամբ գործող «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) Հատուկ վտանգավոր ախտածինների ռեֆերենս, Սննդամթերքի անվտանգության հետազոտությունների փորձարկման, Բուսասանիտարական և բույսերի պաշտպանության միջոցների հետազոտությունների փորձարկման լաբորատորիաները, իսկ Բագրատաշենի և Այրումի սահմանային հսկիչ կետի փորձարկման լաբորատորիաները՝ ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2019 համակարգի ստանդարտների պահանջներին համապատասխան: Միաժամանակ, ՊՈԱԿ-ի Սննդամթերքի անվտանգության հետազորությունների փորձարկման և Հատուկ վտանգավոր ախտածինների ռեֆերենս փորձարկման լաբորատորիաները հավատարմագրվել են նաև ԻՍՕ-17025:2017 համակարգի ստանդարտների պահանջներին համապատասխան (ANAB): Վերոնշյալ լաբորատորիաներն ապահովում են միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան հետազոտություններ:
Միջոցառում 3.2. Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակում	Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի «Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս պետական փորձարկման լաբորատորիաների նշանակման կարգը սահմանելու մասին» N 1448-Ն որոշմամբ ընդունված կարգի (այսուհետ՝ Կարգ) համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի «Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս պետական փորձարկման լաբորատորիաների նշանակման կարգը սահմանելու մասին» N 1448-Ն որոշմամբ ընդունված կարգի համաձայն, Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում 2024 թվականի նոյեմբերի 7-ին և դեկտեմբերի 18-ին հրապարակվել է հայտարարություն՝ սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս պետական փորձարկման լաբորատորիաների նշանակման հայտերի ընդունման մասին: Սննդամթերքի անվտանգության ոլորտում ռեֆերենս լաբորատորիա նշանակվելու համար հայտ է ներկայացվել Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ներկայացված փաստաթղթերը գտնվում են Կարգի համաձայն ստեղծված հանձնաժողովի կողմից ուսումնասիրման փուլում:

Միջոցառում 4.1. Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների ռիսկերի գնահատման գիտական կենտրոնների նշանակում	Մշակվել, շրջանառվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու, կասեցնելու կամ դադարեցնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը ներկայումս գտնվում է լրամշակման փուլում:
Միջոցառում 5.1. ՎՎՀԿԿ սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման թույլտվության կամ մերժման ընթացակարգի ընդունում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել, շրջանառվել և ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 31-ի N 1713-Ա որոշմամբ հավանություն է տրվել «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացրել «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Նախագիծը 2025 թվականի հունվարի 15-ին քննարկվել է Ազգային ժողովի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում, որի կողմից ներկայացվել է դրական եզրակացություն և առաջարկվել Ազգային ժողովի խորհրդին օրենքների նախագծերը ընդգրկել Ազգային ժողովի ութերորդ գումարման իններորդ նստաշրջանի հունվարի 20-ին գումարվող հերթական նիստերի օրակարգում:
Միջոցառում 5.2. ՎՎՀԿԿ սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման ուղեցույցերի մշակում և ընդունում ըստ ոլորտների՝ սննդի ամբողջ շղթայով հետագծելիության ապահովման նպատակով	Մշակվել և շրջանառվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի «Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման ուղեցույցների հաստատման մասին» հրամանի նախագիծը: ՎՎՀԿԿ սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման ուղեցույցներն ընդունելու նպատակով, ««Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում նախատեսվում է սահմանել լիզորող նորմ՝ ոլորտի քաղաքականությունը մշակող նախարարի հրամանով ուղեցույցները հաստատելու վերաբերյալ:
Միջոցառում 6.1 Սննդամթերքի անվտանգության ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման	Էկոնոմիկայի նախարարության և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ ՍԱՏՄ) սննդամթերքի ոլորտի մասնագետները 2024 թվականի սեպտեմբերի 23-25-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել են Եվրոպական Հանձնաժողովի հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր վարչության կողմից կազմակերպված TAIEX աշխատաժողովին, որի շրջանակներում ներկայացվել է վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի

դասընթացների շարունակական բարելավում	(այսուհետ՝ ՎՎՀԿԿ) դերը սննդամթերքի անվտանգության ոլորտում, վերջինիս ներդրման միջազգային փորձը, սննդի սանիտարահիգիենիկ կառավարման ընդհանուր համակարգում հետագծելիության գործընթացների նպատակները, ստուգման իրականացման ընթացքը, ինչպես նաև՝ համակարգի ներդրման ԵՄ սկզբունքները: Սննդամթերքի անվտանգության ոլորտում ՍԱՏՄ-ի կողմից իրականացվող պետական վերահսկողության ստուգաթերթերը ներառում են ՎՎՀԿԿ համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերին վերաբերող հարցեր և աշխատաժողովի ընթացքում տեսուչները ձեռք են բերել համապատասխան փորձ և գիտելիք՝ ստուգումներն ամբողջությամբ իրականացնելու համար: Միաժամանակ, սննդամթերքի անվտանգության ոլորտում կարևորելով բույսերի պաշտպանությանն ուղղված միջոցառումները, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից «Կովկասում և Կենտրոնական Ասիայում մորեխների ազգային և տարածաշրջանային կառավարման բարելավում» ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության քաղաք Ջերմուկում 2024 թվականի հուլիսի 3-5-ը Էկոնոմիկայի նախարարության համապատասխան մասնագետների մասնակցությամբ իրականացվել են մի շարք թեմաներով դասընթացներ, այդ թվում՝ «Կովկասում և Կենտրոնական Ասիայում մորեխների առավել տարածված 3 տեսակների կենսաբանական բնութագիրը, ֆիզիոլոգիան, զարգացման փուլերը և հասցրած էկոլոգիական վնասը», «Դաշտային պրակտիկայի ընթացքում հավաքագրված տվյալների վերլուծություն, տվյալների բազայի միջոցով՝ CCALM ստացված տվյալների ուսումնասիրում, վերլուծություն, սխալների ուղղում և վերջնական տվյալների ամփոփում», «Մարդու և շրջակա միջավայրի վրա թունաքիմիկատների բացասական ազդեցության նվազեցում», «Կենսաբանական պայքարի միջոցների կիրառման արդյունքում սննդամթերքի մեջ թունաքիմիկատների մնացորդային քանակների նվազեցում» թեմաներով:
Միջոցառում 6.2 Սննդամթերքի անվտանգության ոլորտի առկա իրավիճակի գնահատման և ոլորտի բարելավմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) և պետական նպատակային մրցութային ծրագրերի իրականացման համար առաջարկությունների ներկայացում	Միջոցառման կատարումն ապահովելու նպատակով քննարկվել և սահմանված ձևաչափով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է ներկայացվել Էկոնոմիկայի նախարարության ենթակայությամբ գործող «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ-ի «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (ԳՁՕ) առկայության որոշումը կենդանական ծագման սննդամթերքում ու կերերում և դրանց հետ կապված ռիսկերի գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրի հայտը՝ երաշխավորող գրությամբ: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում հնարավորություն կտրվի ոլորտում ներգրավված համապատասխան լաբորատոր կարողություններով հագեցած կազմակերպություններին իրականացնել անհրաժեշտ հետազոտություններ և փորձաքննություններ՝ նպաստելով սննդամթերքի անվտանգության ոլորտի հնարավոր ռիսկերի նվազեցմանը, սպառողների իրազեկվածության բարձրացմանը, սննդամթերքի և կերի ներմուծման ու արտահանման հնարավորությունների խթանմանը: